

ՎՐԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՐԹ
ՐԵՏՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՊԱԳՐՈՒՄԻ ՅՈՒՐՈՒՄԻ ԶՅՅՈՒՄԻ

«Ցրահեմ» (ՆԱՅԱՐՈՅՄԵԼՈՒ)

ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ

№69 - 70 (17380) ՀԱՐԱՐ 6 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025 Թ.
ԳԻՆԸ 40 ԹԵՐԹԻ

ՕՐԵՆԱԴԻՐ

ՊԱՏՎԱՆԱԿՈՒՄԸ ԼՍԵՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԶ ԹԵՄ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄ, ՊԵՏԱՆԱԿԱՆ ԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՍՏԱՏԵՅԻՆ ՄԱՍՈՒԿԱ ՄԻՆԱՐԱՋԵԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ...



Սեպտեմբերի 2-ին աշխատանքը սկսեց 11-րդ գումարանի Վրաստանի խորհրդարանի աշխատանքի նստաշրջանը: Այն բացվեց խորհրդարանի կանոնակարգի համաձայն (սեպտեմբերի առաջին երեքշաբթի օրը) և կավարտվի դեկտեմբերի երրորդ ուրբաթ օրը:

Խորհրդարանի աշխատանքի նստաշրջանի բացմանը ներկա էին Վրաստանի նախագահ Սիխեիլ Ղազվելաշվիլին, վարչապետ Իրակլի Կոբախիձեն, երկրի կառավարության անդամներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի և հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Խորհրդարանի աշխատանքի նստաշրջանի մեկնարկային լիագումար նիստում պատգամավորները քննարկեցին Պետական անվտանգության ծառայության ղեկավարի պաշտոնից Անրի Օխանաշվիլիի հրաժարականի և այդ պաշտոնում Մամուկա Մոխիարաձեի նշանակման, «Գախարիան» հանուն Վրաստանի» կուսակցության 12 անդամներին որպես պատգամավորներ ճանաչելու հարցերը, ինչպես նաև լսեցին խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Թեա Ծուլուկիանիի «Ժամանակավոր քննչական հանձնաժողովի»

«2003-2012 թվականներին գործող ռեժիմի», այս ռեժիմի քաղաքական պաշտոնյաների և 2003 թվականից մինչև օրս քաղաքական կուսակցություններում միավորված ներկա և նախկին պաշտոնյաների գործունեությունը հետաքննելու համար» եզրակացությունը, և դրա հիման վրա ընդունեցին որոշում:

Վրաստանի խորհրդարանը, Պետական անվտանգության ծառայության ղեկավար նշանակված Մամուկա Մոխիարաձեի փոխարեն, ճանաչեց Թուրքիայի Փաղավայի պատգամավորական լիագումարումները:

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻԶԵՆ՝ «ՎՐԱՏԱՆԻ ԵՐԱՋԱՆՔ» ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԶ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԴԵԿԱՎԱՐ



Սեպտեմբերի 3-ին Վրաստանի խորհրդարանի բյուրոյի նիստում Պետական անվտանգության ծառայության ղեկավարի պաշտոնում նշանակված Մամուկա Մոխիարաձեի փոխարեն, Իրակլի Կոբախիձեի դարձավ «Վրացական երազանք» խորհրդարանական խմբակցության նախագահը: Միաժամանակ, Իրակլի Կոբախիձեի

նաև կլինի խորհրդարանական մեծամասնության առաջնորդը:

36-ամյա Իրակլի Կոբախիձեի ծնվել է Թբիլիսիում, «Վրացական երազանք» կուսակցության համամասնական ցուցակով հանդիսանում է 10-րդ և 11-րդ գումարումների Վրաստանի խորհրդարանի պատգամավոր:

ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՎԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՈՒՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿՄԱՍՆԱԿՅԻ 14 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ



Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է հոկտեմբերի 4-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակից քաղաքական սուբյեկտների ցուցակը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաղորդագրության մեջ նշված է, որ ԿԸՀ հրաժարվեց գրանցել «Ժողովրդավարական դաշինք», «Երրորդ

ուղի և «Վրաստանի միասնության ու զարգացման կուսակցություն» քաղաքական միավորներին: Այնպես որ, տեղական ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած 17 քաղաքական սուբյեկտներից ընտրություններին մասնակցում են 14-ը:

(Հարունակությունը՝ 4-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ԶՐՈՅԱԿԱՆ ՀԱՆԳՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼ Է ԱՆՄԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՐԸ»

Օգոստոսի 2-ին, ընթացիկ տարվա մարտին երկրի խորհրդարանի կողմից ստեղծված «2003-2012 թվականներին գործող ռեժիմի» գործունեության ուսումնասիրության խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Թեա Ծուլուկիանիի խորհրդարանի լիագումար նիստում ներկայացրեց ժամանակավոր հանձնաժողովի գործունեության եզրակացությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից, իր լիագործություններով, իր լիագործություններով, իր լիագործություններով:



(Հարունակությունը՝ 2-րդ էջում)

ԲԱՑ ՆԱՄԱԿ՝ ԱՄՆ ՆԱԽԱԳԱԴԻՆ

ՄԻՒՏԵԻԼ ԴԱՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԱՐԺԵՔԱՅԻՆ ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՖՈՒԿՆՈՒՄ ԿՐԱ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ ԱՄՆ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԶԱՐՄԱՆՔ Է ՀԱՐՈՒՅՈՒՄ...»

Վրաստանի նախագահ Սիխեիլ Ղազվելաշվիլին բաց նամակով դիմել է Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփին: Սիխեիլ Ղազվելաշվիլիի նամակում, մասնավորապես, ասված է.



«Նախապես, ցանկանում եմ վերահաստատել իմ խոր հարգանքը Ձեզ որպես ամերիկյան ժողովրդի

աշխարհին: Ինչպես Վրաստանի կառավարության ղեկավարները բազմիցս հրապարակավ հայտարարել են, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ հարաբերությունների վերակարգավորումը եւ մաքուր էջից երկու երկրների միջև ռազմավարական գործընկերության վերականգնումը Վրաստանի արտաքին քաղաքականության գերակա խնդիրներից



կողմից ընտրված առաջնորդի: Ես կրկին հույս եմ հայտնում, որ Ձեր նախագահությունը կամրապնդի Ամերիկայի Միացյալ Նահանգները և կբերի ավելի մեծ բարգավաճում ամերիկյան ժողովրդին, ինչպես նաև ավելի շատ խաղաղություն, հանգստություն և բարգավաճում ամբողջ (Հարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻԱ ՎՈԼՍԿԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՀԱՆՉԱՅԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԾԱՍԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԱՎԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ ԶԻ ՄԱՍՆԱԿՅԵԼ, ՔԱՆԻ ՈՐ ԶԻ ՀԱՆԳԻՍՆՈՒՄ ԱՅՐ ԿԱԾԱՍԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՊԱՏ, ԳԻՏՈՐԳ ԿԱՄ ԵՐԿԻՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏԵՎՈՂ ԵՐԿԻՐ»

Ի պատասխան ընդդիմության սադրիչ հարցի, իբր, «Վրացական երազանքի» քաղաքականության շնորհիվ Վրաստանը հայտնվել է մեկուսացման մեջ և չի ստացել Չինաստանում անցկացված Շանհայի համագործակցության կազմակերպության գագաթնաժողովի մասնակցության հրավեր, Վրաստանի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Գիա Վոլսկին հայտարարեց, որ վերոնշյալ գագաթնաժողովին հրավիրվել էին այդ կազմակերպության անդամները՝ դիտորդի և երկխոսության ձեռնարկով հարաբերությունների կարգավիճակով երկրների ղեկավարները:



- Նախ նշեմք, որ գագաթնաժողովին մասնակցել են այդ կազմակերպության անդամ և դիտորդի կամ երկխոսության հարաբերությունում ունեցող 12 երկրներ, որոնց թվում էին Հայաստանն ու Ադրբեջանը: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա՝ այն կազմակերպության հետ ոչ մի կապ չունի, հետևաբար չէր կարող մասնակցել դրա գագաթնաժողովին: Ընդդիմությունը փորձում է վատազույնս ներկայացնել Վրաստանի քաղաքական կուրսը, դրա վարկաբեկման համար օգտագործելով բացահայտ ստեր, որը չի զարմացնում,- հայտարարեց Գիա Վոլսկին:

ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ՆԵՐՈՒՄ

ՄԻՒՏԵԻԼ ԴԱՎԵԼԱՇՎԻԼԻՆ ՆԵՐՈՒՄ ՀՆՈՐԶԵՅ ՄԱՍՈՒԿԱ ԽԱՉԱՐԱՋԵԻՆ ԵՎ ԲԱՐԻ ԶԱԺԱՐԻՋԵԻՆ

Սեպտեմբերի 5-ին Վրաստանի նախագահ Սիխեիլ Ղազվելաշվիլին ներում է շնորհել Մամուկա Խաչարաձեին և Բադրի Զափարիձեին:

Ներման հրամանագրում Վրաստանի նախագահը հույս է հայտնում, որ «ապագայում նրանք կշարունակեն իրենց քաղաքական գործունեությունը օրենքի նկատմամբ հարգանքով»:

Ներման հրամանագիրը Սիխեիլ Ղազվելաշվիլին պայմանավորեց նրանով, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին նկատմամբ հարգանքով»:

(Հարունակությունը՝ 2-րդ էջում)

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՐՅԻՆ

ՄԻԽԵԻԼ ՂԱՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԱՐԺԵՔԱՅԻՆ ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԻ ՎՐԱ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԿԱՏԱՍԲ ԱՄՆ-Ի ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԶԱՐԿԱՆՔ Է ՀԱՐՈՒՅՈՒՄ...»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մեկն է: Մենք կցանկանայինք հիշեցնել, որ վերոնշյալ ռազմավարական գործընկերությունը չեղարկվել է Բայդենի վարչակազմի կողմից Ձեր՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ ընտրվելուց հետո, Ձեր երդմնակալությունից մի քանի շաբաթ առաջ, որպես ինքնիշխան պետության դեմ ուղղված անարդար, կոշտ ու ագրեսիվ քաղաքականության մաս:

Այս ֆոնին, ցավով, պետք է մեկ անգամ եւս նշել, որ ձեր վարչակազմը պատշաճ ուշադրություն չի դարձնում Վրաստանին, ինչը, կառավարությունների միջև լիակատար արժեքային համապատասխանության ֆոնին, զարմանք է առաջացնում վրացական հասարակության շրջանում:

Հատկանշական է, որ Ձեր նախագահության մի քանի ամիսների ընթացքում Դուք սերտ հարաբերություններ եք հաստատել Վրաստանի բոլոր հարեւան երկրների հետ՝ հաջողությամբ նպաստել եք Ադրբեյջանի և Հայաստանի միջև խաղաղության համաձայնագրի ստորագրմանը, ակտիվ համագործակցել եք Թուրքիայի կառավարության հետ և նույնիսկ վերականգնել եք գործընկերությունը Վլադիմիր Պուտինի հետ: Սակայն, այս ֆոնի վրա, ձեր վարչակազմը ոչինչ չի ասում Վրաստանի մասին, որը, ինչպես արդեն նշել եմ, զարմանալի է վրացական հանրության համար:

Հուսով եմ, որ ձեր վարչակազմի վերաբերմունքը Վրաստանի նկատմամբ կփոխվի: Կարելի է, որ վրաց ժողովուրդը Միացյալ Նահանգները կապի ոչ թե «Դիփ Սթեյթ»-ի, այլ՝ ուժեղ ամերիկացի նախագահի հետ, ոչ

թե խաղաղությունը խաթարելու և անկայունացնելու մշտական փորձերի, այլ՝ խաղաղության ու կայունության հետ, ոչ թե գեներալային և ԼԳԲՏ քարոզչության, այլ՝ ավանդական արժեքների նկատմամբ հարգանքի հետ:

Անձամբ ես՝ որպես Վրաստանի նախագահ, պատրաստ եմ ամեն ինչ անել՝ օգնելու վրացական կառավարությանը իրականացնել իր հայտարարած նպատակը՝ վերականգնել Վրաստանի և Միացյալ Նահանգների միջև ռազմավարական գործընկերությունը մաքուր էջից և կոնկրետ ճանապարհային քարտեզով: Իսկ այդ նպատակին հասնելու անհրաժեշտ պայմանը ձեր վարչակազմի կողմից վրացական պետության և վրաց ժողովրդի նկատմամբ արդար և ուշադիր վերաբերմունքի հաստատումն է»,- ասված է Վրաստանի նախագահի բաց նամակում:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՄԱՍՈՒԿԱ ՄԳԻՆԱՐԱՋԵՆ՝ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Սեպտեմբերի 2-ին Վրաստանի խորհրդարանը, իր լիազույժար նիստում, 85 կողմ ձայներով Պետական անվտանգության ծառայության պետի պաշտոնում հաստատեց Մամուկա Մոխնարաձեի թեկնածությունը:

Քվեարկությունից հետո Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին շնորհավորեց Մամուկա Մոխնարաձեին նոր պաշտոնում ընտրվելու կապակցությամբ: Խորհրդարանի նախագահը Մամուկա Մոխնարաձեին շնորհակալություն հայտնեց Վրաստանի խորհրդարանի երեք գումարումների ընթացքում կատարած աշխատանքի համար:

- Վատահ եմ, որ Մամուկա Մոխնարաձեին կլինի Պետական անվտանգության ծառայության ակնառու ղեկավար

և ավելի կամրապնդի այն անվտանգության համակարգը, որը Վրաստանը ստեղծել է տարիների ընթացքում և, որը թույլ է տալիս մեզ պահպանել խաղաղությունը, բարգավաճման աճի տեմպերը, որոնք մենք ունենք տարածաշրջանային ամորոշությունների ու անկայունությունների մեջ, որոնց միջով անցնում է Վրաստանը: Մենք Մամուկա Մոխնարաձեին մաղթում ենք նույն հաջողությունը, ինչը նա ունեցավ որպես հաջողակ պատգամավոր և մեծամասնության առաջ-

նորդ,- ասաց Շավլա Պապուաշվիլին: Անրի Օխանաշվիլին կզբաղեցնի ազգային անվտանգության հարցերով Վրաստանի վարչապետի խորհրդակցի պաշտոնը:

47-ամյա Մամուկա Մոխնարաձե տարիների ընթացքում տարբեր պաշտոններ է զբաղեցրել Վրաստանի դատազույժարում, 2016 թվականից վերջին երեք գումարումների Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր է, հանդիսանում է խորհրդարանական մեծամասնության ղեկավար, «Վրացական երազանք» խորհրդարանական խմբակցության նախագահ, կուսակցության գործադիր քարտուղար:



ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ՆԵՐՈՒՄ

ՄԻԽԵԻԼ ՂԱՎԵԼԱՇՎԻԼԻ ՆԵՐՈՒՄ ԸՆՈՐՇԵՅ՝ ՄԱՍՈՒԿԱ ԽԱՉԱՐԱՋԵԻՆ ԵՎ ԲԱՂԻ ԶԱՓԱՐԻՉԵԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գրանցված քաղաքական միավորումների թվում է «Հզոր Վրաստան-Լեյո» կուսակցությունը, որի առաջնորդները ներկայումս պատիժ են կրում քրեակատարողական հիմնարկում՝ կոնկրետ հանցագործության համար:

«Ամիերքելի է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կանցկացվեն մրցակցային միջավայրում՝ նույնիսկ նրանց ազատագրված

պայմաններում: Չպետք է անտեսել նաև այն փաստը, որ հազարաձեռն և Չափարիձե մի քանի շաբաթ առաջ մերժեցին իմ ներման առաջարկը՝ այդպիսով փորձելով վիրավորել նախագահի ինստիտուտը: Այնուամենայնիվ, վերը նշված բոլոր հանգամանքներից անկախ, որպեսզի ոչ մեկին չթողնեմ որեւէ պատճառ ասելու, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են սահմանափակ մրցակցության պայմաններում, ես որոշում եմ կայացրել ներում չնորհել երկու դատապարտյալի՝

Մամուկա Խաչարաձեին և Բաղի Չափարիձեին: Կոչ եմ անում բոլոր ընտրական սուբյեկտներին՝ նպաստել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների առողջ և խաղաղ միջավայրում անցկացմանը: Հաջողություն եմ մաղթում բոլոր մասնակցող ընտրական սուբյեկտներին: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում համայնքների զարգացման և բնակչության շահերի իրացման անկեղծ ոգով»,- ասված է Միխեիլ Ղավելաշվիլիի հայտարարության մեջ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԱՆԻ. «ԶՐՈՅԱԿԱՆ ՀԱՆԳՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՎԱՐԳԵԼ Է ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րի շրջանակներում, վերանայել ու գնահատել է իր տրամադրության տակ եղած տեղեկատվությունը և այդ գնահատման ու վերլուծության արդյունքում պարզել է, որ 2004-2012 թվականներին «Ազգային շարժման» կողմից «գրոյական հանդուրժողականության» քրեական արդարադատության քաղաքականության իրականացման արդյունքում, Վրաստանի ՆԳՆ կառույցներում և քրեակատարողական համակարգում կալանավորվածների, բանտարկյալների, մեղադրյալների/դատապարտյալների նկատմամբ խոշտանգումները և անմարդկային վերաբերմունքը եղել են համակարգված:

- Հետաքննչական հանձնաժողովը, զեկույցում ներկայացված բազմաթիվ դեպքերի վերանայման արդյունքում պարզել է նաև, որ տիրում էր անպատժելիության համախտանիշ, եւ իրավապահ մարմինները բարձր քաղաքական աջակցություն ունեին բռնության կիրառման համար: Հետեւաբար, բռնությունը հիմնական շարժիչ ուժն էր: Դրան մասին է վկայում նաև այն փաստը, որ այս զեկույցում ներկայաց-

ված փաստերին հակառակ, Միխեիլ Սաակաշվիլին նախագահական շքանշաններ է շնորհել մի շարք անձանց, որոնք իրենք են կատարել խոշտանգումներ կամ անմարդկային վերաբերմունք կամ ղեկավարել են բռնի համակարգ: Չեկույցում ներկայացված են տվյալ անձանց անունները և նրանց ստացած պարգևների ցանկերը, և Հետաքննչական հանձնաժողովը կարծում է, որ պետք է դիմի Վրաստանի նախագահին այլ համապատասխան մարմինների օգնությամբ, որպեսզի ապահովի 2004-2013 թվականներին տրված պարգևների վերանայումը, հատկապես մարդկության դեմ հանցագործություններ կատարած անձանց դեպքում,- ընդգծեց Թեա Ծուլուկիանին:

Ժամանակավոր հանձնաժողովի նախագահի հավաստմամբ, Վրաստանից Եվրոպական դատարան ուղարկված բողոքների վիճակագրական տվյալները հստակ ցույց են տալիս մարդու իրավունքների վիճակը Վրաստանում «Ազգային շարժման» կառավարության օրոք. ընդհանուր առմամբ, 1999 թվականից ի վեր, Եվրոպական դատարանը Վրաստանի դեմ խախտումներ է ար-

ձանագրել 284 գործում, որոնց 80 տոկոսը (227 գործ) վերաբերում է 2004-2012 թվականներին տեղի ունեցած փաստերին: Այս 227 գործերի շրջանակներում ամենից հաճախ պարզվել է, որ «Ազգային շարժումը» խախտել է Եվրոպական կոնվենցիայի 2-րդ (կյանքի իրավունք), 3-րդ (խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելք), 5-րդ (ազատության և անվտանգության իրավունք) և 6-րդ (արդար դատաքննության և սեփականության պաշտպանության իրավունք) հոդվածները:

- 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պարտավորեցրել է Վրաստանի պետությանը դիմորդներին վճարել, ընդհանուր առմամբ, մոտ երկու միլիոն եվրո փոխհատուցում «Ազգային շարժման» ռեժիմի կողմից խախտված իրավունքների պատճառով նյութական ու բարոյական վնասի, ինչպես նաև՝ կրած ծախսերի համար,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

Եզրակացությունը 430 էջանոց է և նախատեսվում է ուղարկել Սահմանադրական դատարան: Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ ծունեությունը 2012-2025 թթ.:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՔՆԵՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆ ԎՐԱ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԸՆԴՈՒՆԵՅ ԲԱՆԱՋԵՎ

Վրաստանի խորհրդարանը հրապարակել է «2003-2012 թթ. գործող ռեժիմի», այդ ռեժիմի քաղաքական պաշտոնյաների և քաղաքական կուսակցություններում ընդգրկված գործող ու նախկին պաշտոնյաների 2003 թվականից մինչ օրս գործունեության ուսումնասիրության Վրաստանի խորհրդարանի ժամանակավոր քննիչ հանձնաժողովի» եզրակացությունը և համապատասխան որոշումը:

Հանձնաժողովի եզրակացությունը պարունակում է մոտ 500 էջ: Ինչպես նշված է խորհրդարանի տարածած հաղորդագրության մեջ, հաշվետվությունում գնահատված է «2003-2012 թթ. գործող ռեժիմի», այդ ռեժիմի քաղաքական պաշտոնյաների և քաղաքական կուսակցություններում ընդգրկված նախկին ու ներկա պաշտոնյաների գործունեությունը՝ սկսած 2003 թվականից մինչև օրս:

Խորհրդարանի տվյալներով՝ քննիչ հանձնաժողովի եզրակացության մեջ վերլուծված փաստերի հիման վրա խորհրդարանը եզրակացրել է, որ տեղի է ունեցել «Ազգային շարժման» ռեժիմի կողմից իրականացված խոշտանգումներ և անմարդկային վերաբերմունք, «Ազգային շարժման» ներկայացուցիչների կողմից կատարված սպանություններ և բռնություն, անձնական կյանքի անձեռնմխելիության խախտում, կոռուպցիա, բիզնեսի նեկետ և սեփականության իրավունքի կոպիտ խախտումներ, մեղիայի ազատության դեմ գործողություններ, Վրաստանի տարածքային ամբողջականության և խաղաղության գործընթացների դեմ գործողություններ, Միխեիլ Սաակաշվիլիի, «Ազգային շարժման» և նրանց հետ առնչվող անձանց ապակառուցողական գործողությունները 2012-2025 թթ.:

ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՈՎԱԿԱՐԿՄԱՆ ՄԱՐՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԵՎ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉԱՐԸԱՎԸ ԱՎԵԼԻ ՈՒ ԱՎԵԼԻ Է ԾԱՎԱԿՈՒՄ

ԹԲԻԼԻՍԻ. ԿԱՄԱԿԱՍՑԵՆ ՆԵՐԿԱՅԱՅՐԵՅ ԵՎ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ



Սեպտեմբերի 1-ին Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն հանրությանը ներկայացրեց Թբիլիսիի սակրեբուլոյի համամասնական պատգամավորության թեկնածուների 20 անձից կազմված ցուցակը, եւ առաջիկա չորս տարիներին գործունեության հիմնական ուղղությունները:

Քաղաքապետի թեկնածուն, մասնավորապես, խոսեց մայրաքաղաքի բնակչության կենսամակարդակի համար հատուկ նշանակություն ունեցող ենթակառուցային նախագծերի մասին:

ԿԱՄԱԿԵՐ ԼԱԲՈՒՉԻՅԵՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐԸ ԻՍԱՆԻ ԵՐԶԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Իր նախընտրական քարոզարշավի շրջանակում, Իսանիի շրջանից Թբիլիսիի սակրեբուլոյի մեծամասնական պատգամավորության թեկնածու Կախաբեր Լաբուշիձեն սեպտեմբերի 5-ին հանդիպումներ ունեցավ շրջանի Սետրոշին թաղամասի Ղվարելիի եւ Աժոլուրիի փողոցների բնակիչների հետ:

Հանդիպումներին պատգամավորության թեկնածուն խոսեց անցած չորս տարիներին մայրաքաղաքում, կոնկ-



րետ Սետրոշինի թաղամասում, Աժոլուրիի փողոցում իրականացված ու իրականացվող ճանապարհաշինական աշխատանքների մասին, ներկայացրեց առաջիկայում ծրագրված ենթակառուցային նախագծերը:

ԱՄԱԼՔԱԼՔԻ. ՔԱՂԱՔԱՂԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԵՎ ՏԵՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԲՆԱՐԿԵՅԻՆ ԵՆԹԱԿՈՒՅՑԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ



Այս ալքալաքիի մունիցիպալիտետի գործող քաղաքապետ, հոկտեմբերի 4-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման ընտրություններին «Վրացական երազանքի» կողմից առաջադրված քաղաքապետի թեկնածու Սելբոն Սակարյանը, իր նախընտրական քարոզարշավի շրջանակում, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանի, սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանի ուղեկցությամբ, հանդիպումներ ունեցավ մունիցիպալիտետի Դիլիսկա, Չունչխա, Պտենա, Կարծախի, Փիլիպովկա, Բոզալի, Սուլդա, Դադեշ, Օկամիի, Քարցեբի, Գոգաշենի, Ազմանա, Կիրովականի, Կունուրդո, Վաչխանի, Մուրջախեթի եւ Չամծկալա գյուղերում:

Հանդիպումներին, տեղի բնակչության հետ միասին, քննարկվել են առկա խնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաեւ՝ արդեն իրականացված ծրագրերն ու ապագայի տեսլականը:

ՆԻՆՈՍԻՆԴԱ. ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՂԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՅՐԵՅ ԻՐԵՆՑ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի գործող քաղաքապետ, առաջիկա ընտրություններին «Վրացական երազանք» կուսակցության կողմից արդեն երրորդ անգամ քաղաքապետի թեկնածու առաջադրված Անի Մոսոյանը, իր նախընտրական քարոզարշավի շրջանակում, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Սամվել Մանուկյանի, Սմբատ Կյուրեղյանի, սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանի ուղեկցությամբ, հանդիպումներ ունեցավ մունիցիպալիտետի Մեծ Խանջալի, Կաթնատու,



Փոքր Խանջալի, Ջիգրաշեն, Փոքր Խորենի, Փոկա, Գանձա եւ Տամբուկա գյուղերի բնակիչների հետ: Հանդիպումներին տեղի բնակիչները քաղաքապետի թեկնածուին ներկայացրին տեղացիներին մտահոգող առաջնահերթությունները: Ինչպես նաեւ Անի Մոսոյանը, ունեցանք անկեղծ զրույցներ, ստացանք՝ ջերմություն, աջակցություն եւ լսեցինք այն իրական խնդիրների մասին, որոնց ժողովուրդը ամեն օր է բախվում:


ԱՄԱԼՅԻՍԵ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉԱՐԸԱՎԸ ԿՐՈՒՄ Է ՆԱԵՎ ՀԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ

Հոկտեմբերի 4-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման ընտրություններին «Վրացական երազանքի» կողմից առաջադրված Ախալցխի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու Վառլամ Ծիկաուրին, փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանի ուղեկցությամբ, իր նախընտրական քարոզարշավի շրջանակում, որը նաեւ կրում է ճանաչողական բնույթ, հանդիպումներ ունեցավ Ծղուրո, Եվինեթի, Անի, Էլիածմինդա, Ավիրի, Բոգա, Տատանիսի, Սյավիլիսի, Իվլիտա, Կլդե, Ծնիսի գյուղերի բնակիչների հետ:



(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏՐ ԱՅՅԵԼԵՑ ԻՄԵՐԵԹԻ ԵՎ ԱԶԱՐԻԱՅԻ ՇՐՋԱՆՆԵՐ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետ Իրակլի (Դաչի) Բերախան այցելեց Իմերեթիի եւ Աջարիայի տարածաշրջանների մաքսային անցակետեր եւ տնտեսական ձեռակերպումների գոտիներ: Նա ծանոթացավ եւ հանդիպումներ անցկացրեց մաքսային վարչության ներկայացուցիչների հետ, հանդիպումներին մասնակցեցին մաքսային վարչության պետ Սիխել Չոկոչվիլին եւ այլ պատասխանատու անձինք:

Տարածաշրջան կատարած այցի ընթացքում, եկամուտների ծառայության պետն այցելեց նաեւ Ջեստափոնիի, Քուբայիսիի եւ Բաթումիի քաղաքացիների սպասարկման կենտրոններ, որտեղ, սպասարկման վարչության, հարկային մոնիթորինգի եւ պարտքերի կառավարման վարչությունների աշխատակիցների հետ, քննարկեց առկա մարտահրավերներն ու ապագա ծրագրերը: Բացի այդ, եկամուտների ծառայության պետը մանրա-

մասն խոսեց նորագույն տեղեկատվական համակարգերի, ինչպես նաեւ տեխնիկական հագեցվածության ու անձնակազմի մասնագիտական զարգացման անհրաժեշտության մասին:

Տարածաշրջանային հանդիպումներին մասնակցեցին եկամուտների ծառայության պետի առաջին տեղակալ Պատա Կիլաձեն, պետի տեղակալներ Իրակլի Շարտավան եւ Լեւան Ցիտելաշվիլին, ինչպես նաեւ՝ աուդիտի



բաժնի պետ Զաալ Տղեշելաշվիլին, պարտքերի կառավարման բաժնի պետ Թեյմուրազ Գաբաղաձեն, ծառայությունների բաժնի պետ Գիորգի Պատարիձեն եւ հարկային մոնիթորինգի բաժնի պետ Նիկոլոզ Կանկիան:

ԿԱՆԽԱԿԵԼ Է ՈՍԿՈՒ ՉՈՒԼԱԿՏՈՐՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ



Հարձակված ծուլակտորի մաքսային արժեքը կազմում է 131 657 լարի:

Գործի նյութերը, հետագա արձագանքման համար, առաքվել են ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը:

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, «Սարփի» սահմանային անցակետում, կասկածի հիման վրա, խուզարկեցին օտարերկրյա քաղաքացու ավտոմեքենան: Խուզարկության արդյունքում հայտնաբերվել են ավելի քան 600 գրամի բացառիկ դրոշմով ոսկե ծուլակտոր:

Հայտնագրված ծուլակտորի մաքսային արժեքը կազմում է 131 657 լարի:

Գործի նյութերը, հետագա արձագանքման համար, առաքվել են ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը:

ԲԱՑԱՐԱՅՏՎԵԼ Է 143 ՀԱԶԱՐ ԼԱՐԻ ՈՍԿԵՂԵՆԻ ԴՈՒՐԱԲԵՐՄԱՆ ԴԵՊԵ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, ՆԳ նախարարության պահպանության ոստիկանության դեպարտամենտի ավազիոն անվտանգության վարչության աշխատակիցների հետ համատեղ անցկացրած գործողության արդյունքում, «Թբիլիսիի օդանավակայան» մաքսային անցակետում բացահայտել են 49 ոսկեդրամների (ընդհանուր քաշը՝ 477,97 գրամ) եւ թանկարժեք քարերի դուրսբերման դեպք: Ապօրինի ապրանքը հայտաբերվել է օտարերկրյա քաղաքացու ուղեբեռի խուզարկության արդյունքում:

Քում: Ապրանքի ընդհանուր արժեքը կազմել է 143 972 լարի: Գործի նյութերը, հետագա արձագանքման համար, առաքվել են ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայություն



Հարձակված ծուլակտորի մաքսային արժեքը կազմում է 131 657 լարի:

ՅՈՒՐՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿՄԱՍՆԱԿՅԻ 14 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այսպես, 1 ընտրահամարի տակ ցուցակում նշված է «Հայրենիք, լեզու, կրոն», 3 ընտրահամարի տակ՝ «Պահպանողականները Վրաստանի համար», 4 ընտրահամարի տակ՝ «Վրացիների միասնություն», 5 ընտրահամարի տակ՝ «Մեր միացյալ Վրաստանը», 7 ընտրահամարի տակ՝ «Ազատ Վրաստան», 8 ընտրահամարի տակ՝ «Վրաստանի հայրենասերների դաշինք», 9 ընտրահամարի տակ՝ «Հզոր Վրաստան-Լեւոն», 10 ընտրահամարի տակ՝ «Ձախտի դաշինք», 11 ընտրահամարի տակ՝ «Վրաստան», 12 ընտրահամարի տակ՝ «Կանաչների կուսակցություն», 14 ընտրահամարի տակ՝ «Ժողովրդական իշխանություն», 25 ընտրահամարի տակ՝ «Գախարիան՝ Վրաստանի համար», 36 ընտրահամարի տակ՝ «Գիրչի» եւ 41 ընտրահամարի տակ՝ «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» քաղաքական սուբյեկտները:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԵՎ ՍՈՒՆԻՅԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉԱՐՇԱՎԸ ԱՎԵԼԻ ՈՒ ԱՎԵԼԻ Է ԾԱՎԱԿՈՒՄ

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

ԲՈՒՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՅԻՆ ԱՌԿԱ ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐՆԵՐԸ



«Վրացական երազանք» կուսակցության կողմից առաջադրված Բոլնիսի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու Ջամուր Երեմյանը, մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր, չորրորդ անգամ սակրեբուլոյի պատգամավորության թեկնածու առաջադրված Լեւոն Մանուկյանի հետ, նախընտրական քարոզարշավի շրջանակում, հանդիպում ունեցավ մունիցիպալիտետի Զվենո Բոլնիս-Խաչեն գյուղի բնակիչների հետ:

Տեղացիները քաղաքապետի թեկնածուին ներկայացրին ճանապարհային ենթակառուցվածքի հետ կապված հիմնախնդիրները, խոսեցին իրենց հուզող հարցերի մասին: Քաղաքապետի թեկնածուն տեղացիներին հավաստիացրեց, որ այդ հարցերն ինքը կներառի իր նախընտրական ծրագրում եւ հնարավորինս կաջակցի դրանց կարգավորմանը:

Հանդիպմանը մասնակցեցին եւ Ելույթ ունեցան «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայրոբյանը, Թբիլիսիի Պ.Աղանյանի անվան պետսպորտամայի թատրոնի տնօրեն Արմեն Բայանդուրյանը:

ԱՍԳԻՆՅԱՆ ԲՈՍՏՈՍ ՄԱՐՏԱՔՎԵԼԻՅԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՅԻՆ ՍՈՒՆԻՅԻՊԱԼԻՏԵՏԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԻՐ ՏԵՍԱԿԱՆԸ

«Վրացական երազանք» կառավարող կուսակցության կողմից երրորդ անգամ Ասպինձայի մունիցիպալիտետի



քաղաքապետի թեկնածու առաջադրված Բոստոն Մազարավելիձեն, ի տեղեկատվություն հանրությանը, սոցցանցում ներկայացրեց անցած ութ տարիներին կատարած աշխատանքները եւ մանրամասնեց առաջիկա չորս տարիներին կատարվելիք ծրագրերը:

Գործող քաղաքապետի հավաստմամբ, Ասպինձայի մունիցիպալիտետում իրականացվել են բավական բոլոր տարբեր նշանակության ենթակառուցային նախագծեր: Բոստոն Մազարավելիձեն վստահություն հայտնեց, որ առաջիկա չորս տարում համատեղ ջանքերով իրենք կարող են կարգավորել բնակչությանը հուզող բազում հարցեր:

ԾԱԿԱ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՄԱՆՐԱՄԱՆԵՅ ԱՌԱՅԻՎ ԾՐԱԳՐԵՐԸ



«Վրացական երազանք» կուսակցության կողմից երկրորդ անգամ քաղաքապետի թեկնածու առաջադրված Իլիա Սաբաձեն Ծակայի մունիցիպալիտետում շարունակում է իր նախընտրական քարոզարշավը:

Այս անգամ, գործող քաղաքապետն ու քաղաքապետի թեկնածուն հանդիպումներ ունեցան Դաշբաշ, Դարաքով, Օզնի, Թրիպլեթի, Սամբա, Տբեթի գյուղերի բնակիչների հետ: Իլիա Սաբաձեն հանդիպումներում խոսեց ոչ միայն անցած չորս տարիներին մունիցիպալիտետում տեղ գտած փոփոխությունների մասին, այլեւ՝ մանրամասնեց առաջիկա չորս տարիներին ծրագրված ենթակառուցային նախագծերը:

Հանդիպումներին Իլիա Սաբաձեն պատասխանեց տեղացիներին հետաքրքրող հարցերին:

ՄԱՌԵՌՈՒՆ ԶԱՏՈՎ ՈՒՆԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՎԵՍՏԻ ՈՒ ՄՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՄԱՆԸ

«Վրացական երազանք» կուսակցության կողմից առաջիկա տեղական ինքնակառավարման ընտրություններին առաջադրված Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու Դաուրի Իսմաիլովը, իր նախընտրական ծրագրում, հատուկ տեղ է հատկացնում մունիցիպալիտետում արվեստի ու սպորտի զարգացմանը: Այդ մասին նա հայտարարեց տեղի ստեղծագործական կոլեկտիվների եւ մարզիկների հետ հանդիպմանը:

Դաուրի Իսմաիլովի նախընտրական ծրագրում նշա-



նակալի է նաեւ առանձին բնակավայրերում առկա հիմնախնդիրների կարգավորումը: Մասնավորապես, մունիցիպալիտետի Դամիա-Գեուրարիսի, Օփերթի, Աղբյուրփի վարչական միավորի բնակավայրերի բնակիչների հետ հանդիպմանը՝ քաղաքապետի թեկնածուն անդրադարձավ առաջիկայում ծրագրված ենթակառուցային նախագծերին, նշելով, որ դրանց իրականացումը զգալիորեն կբարելավի տեղացիների կենսապայմանները:

ԹԵՐԻՍՎԱՐՈՂ ԳՈՒՌՈՒԿՅԻՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՅԻՆ ՀՈՒՋՈՂ ՀԻՄՆԱԶԱՐՅԵՐԸ



Կառավարող «Վրացական երազանքի» կողմից առաջիկա ընտրություններին առաջադրված Թերթիժարոյի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու Միխեիլ Ավիցիանովը, իր նախընտրական քարոզարշավի շրջանակում, հանդիպումներ ունեցավ մունիցիպալիտետի Դուռնուկ, Իվանովկա, Գուլթե, Երվանջ եւ Սանձվիլթե գյուղերի բնակիչների հետ:

Հանդիպումներին տեղացիները բարձրացրին ճանապարհային ենթակառուցված շտապ կարգավորման ու գազիֆիկացման աշխատանքների իրականացման անհրաժեշտության հարցը: Քաղաքապետի թեկնածուն տեղացիներին հավաստիացրեց, որ իր նախընտրական ծրագրում այդ հարցերի կարգավորմանը հատկացվել է կարևոր տեղ, եւ իրենք անմիջականորեն ձեռնամուխ կլինեն դրանց լուծմանը:

Պատրաստեց ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԸ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՊԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՐԲ, ՅՈՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՐԸ ՍԱՌԵՅՎԵԼ ԵՆ

Վրաստանի դատախազության միջնորդությամբ, Թբիլիսիի քաղաքային դատարանը ստեղծել է 7 ՀԿ-ների բանկային հաշիվները:

Մասնավորապես, ստեղծվել են Քաղաքացիական հասարակության հիմնադրամի, ISFED-ի, IDFI-ի, GDI-ի, «Ժողովրդավարության պաշտպաններ», «Սափարի» եւ «Սոցիալական արդարադատության կենտրոն» հասարակական կազմակերպությունների բանկային հաշիվները:

Դատախազության պարզաբանմամբ, առգրավումը տեղի է ունեցել «Սիացյալ

չեզոք Վրաստան» շարժման ներկայացուցիչներից մեկի՝ Վատո Շաքարիշվիլիի դիմումի հիման վրա իրենց սկսած քրեական հետաքննության շրջանակում:

Ըստ դատախազության այս կազմակերպությունների կատարած հանցագործությունն այն է, որ նրանց «նպատակային միջոցներն օգտագործվել են այնպիսի սարքավորումներ գնելու համար, ինչպիսիք են

հատուկ գազային դիմակները, պաշտպանիչ ակնոցները, դիմակները, դեմքի ծածկոցները, պրպեղի սփրեյը եւ այլ միջոցներ, որոնք ցուցարարները օգտագործել են ոստիկանության հետ բռնի բախումների ժամանակ»: Վրացական հասարակական կազմակերպությունները, որոնց հաշիվները սառեցվել են, հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, նշելով, որ չնայած սահմանափակմանը, կշարունակեն իրենց գործունեությունը:

Վրաստանի դատախազության վերոնշ-

յալ որոշումը խիստ բացասական են ընդունել մի շարք միջազգային կազմակերպություններ: Վերոնշյալ յոթ հասարակական կազմակերպություններին համերաշխություն է հայտնել ավելի քան 50 կազմակերպություն, նշելով, որ բանկային հաշիվների սառեցումը որպես մարդու իրավունքների խախտում է, եւ այդ գործողությունները մեկ անգամ եւս հաստատվում է, որ «Վրացական երազանքի» շահերից չի բխում եվրամիության հետ առանց վիզայի ճանապարհորդության պահպանումը: